

## ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱԿԱՆ ՕՐԵՆՍԳԻՐՔ» ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ  
ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ»  
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՕՐԵՆՔԻ, «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԶԱԿԱՆ  
ԴԱՏԱԿԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ  
ՄԱՍԻՆ», «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱԿԱՐՈՒԹՅԱՆ  
ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ՀԱՅԱՍՏԱՆ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱԿԱՐՈՒԹՅԱՆ  
ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՎ  
«ՄՆԱՆԿՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ»  
ՕՐԵՆՔՆԵՐԻ ԸՆԴՈՒՄԱՆ

### 1. Ընթացիկ իրավիճակը և իրավական ակտի ընդունման անհրաժեշտությունը

1.4 Ճռաբեկ դատարանում վարչական և հակակոռուպցիոն պալատների ստեղծումը:

Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ ամրագրվեց վարչական դատարանը՝ որպես մասնագիտացված դատարան՝ այդպիսով ստեղծելով երաշխիքներ տվյալ ոլորտում դատական պաշտպանության իրավունքի իրացման արդյունավետությունը և լիարժեքությունը՝ արդարադատության այդ տեսակին բնորոշ առանձնահատկությունների հաշվառմամբ ապահովելու համար:

Այս առումով հարկ է նշել, որ Սահմանադրական դատարանը 25.11.2008 թվականի թիվ ՍԴՈ-780, 13.04.2010 թվականի թիվ ՍԴՈ-873 և 10.02.2015 թվականի թիվ ՍԴՈ-1190 որոշումներով արտահայտել է մի շարք սկզբունքային իրավական դիրքորոշումներ՝ Հայաստանի Հանրապետությունում վարչական արդարադատության արդյունավետ իրականացման և մասնագիտացված արդարադատության վերաբերյալ, որոնք հանգում են հետևյալին՝

1) մասնագիտացված արդարադատության, այդ թվում՝ վարչական արդարադատության, ինստիտուտի ներդրումը, ի թիվս այլոց, նպատակ է հետապնդում առաջին հերթին դատավորների մասնագիտացման միջոցով ապահովել տվյալ ոլորտում դատական պաշտպանության իրավունքի իրացման արդյունավետությունը և լիարժեքությունը՝ արդարադատության այդ տեսակին բնորոշ առանձնահատկությունների հաշվառմամբ: Մասնագիտացված դատարանների ստեղծումը բխում է հասարակական կյանքի առանձին ոլորտներում առաջացող հարաբերությունների կապակցությամբ պատշաճ արդարադատություն իրականացնելու պահանջից: Դատավորները մասնագիտանում են որոշակի

կատեգորիայի գործերով արդարադատության իրականացման մեջ, և այս դեպքում դատական սխալի հավանականությունն ավելի փոքր է: Հետևաբար, այդ ինստիտուտի բնականոն և լիարժեք կենսագործունեությունը պահանջում է, որպեսզի մասնագիտացման գործոնը հստակ արտահայտված լինի տվյալ տեսակի գործերի քննության իրավասությամբ օժտված բոլոր դատական ատյաններում.

2) վարչական մասնագիտացված արդարադատության ոլորտում անձի իրավունքների դատական պաշտպանության իրավունքի արդյունավետությունը պայմանավորված է ոչ միայն բողոքարկման միակ ատյանի՝ վճռաբեկ դատարանի մատչելիությամբ և արդյունավետությամբ, այլ այդ իրավունքի արդյունավետությունը պայմանավորող կարևոր հանգամանք է նաև վճռաբեկ դատարանում մասնագիտացման գործոնի լիարժեք դրսևորումը:

Պետք է նկատել, որ Վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի դատավորների վերաբերյալ դատական իշխանության պաշտոնական կայքում հրապարակված տվյալների ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ պալատի 11 դատավորներից 5-ը մինչև Վճռաբեկ դատարանում պաշտոնավարումն սկսելը կամ մասնագիտացված վարչական արդարադատության ներդնումը ունեցել են վարչական մասնագիտացում կամ վարչական ոլորտի, հանրային իրավահարաբերություններից բխող գործերի քննության, այդ թվում՝ տնտեսական դատարանում դատավորի փորձառություն (տնտեսական դատարանը Հայաստանի Հանրապետության 1998 թվականի հունիսի 17-ի քաղաքացիական դատավարության օրենսգրքի 16-րդ հոդվածի 2-րդ մասի ուժով իրավասու էր քննել հանրային իրավահարաբերություններից բխող գործեր): Բացի այդ, Վճռաբեկ դատարանում դատավոր նշանակվելու համար առաջխաղացման ենթակա դատավորների թեկնածուների ցուցակում ընդգրկվելու համար պահանջվում է համապատասխան մասնագիտացում՝ քաղաքացիական, վարչական կամ քրեական, ինչը ենթադրում է, որ Վճռաբեկ դատարանում դատավոր է նշանակվում այս մասնագիտացումներից որևէ մեկն ունեցող դատավորը, սակայն Վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատում նշանակված դատավորը պետք է ունենա 2 մասնագիտացում: Ըստ այդմ, «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 30-րդ հոդվածում իրավական ֆիկցիայի միջոցով փորձ է արվել հաղթահարել նշված իրավիճակը՝ սահմանելով, որ Վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի դատավորները համարվում են միաժամանակ քաղաքացիական և վարչական մասնագիտացումներ ունեցող:

Ուշագրավ է, որ այլ երկրների օրենսդրության ուսումնասիրությունը ևս ցույց է տալիս, որ մի շարք երկրների դատական համակարգերում գործում են վարչական

դատարանի ակտերը վերանայող մասնագիտացված ատյաններ: Ռուսաստանի Դաշնությունում, Վրաստանի Հանրապետությունում, Լատվիայի Հանրապետությունում վճռաբեկ դատարանների կազմում գործում են առանձին վարչական պալատներ, իսկ Գերմանիայի Հանրապետությունում, Ավստրիայի Հանրապետությունում, Շվեդիայի Թագավորությունում, Լիտվայի Հանրապետությունում և մի շարք այլ երկրներում գործում են վարչական գործերով առանձին վճռաբեկ (գերագույն) դատարաններ:

Հատկանշական է, որ Վճռաբեկ դատարանում վարչական պալատի ստեղծման անհրաժեշտությունն ամրագրված է դատական և իրավական բարեփոխումների 2019-2023թթ. ռազմավարությամբ:

Մինևույն ժամանակ, Վճռաբեկ դատարանում ստացված, վարույթ ընդունված և չընդունված բողոքների վերաբերյալ վիճակագրությունը ցույց է տալիս, որ քաղաքացիական գործերով վճռաբեկ բողոքների թիվը շուրջ երկու անգամ գերազանցում է վարչական գործերով բողոքների թվին.

### ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ

(2018-2020թթ. Վճռաբեկ դատարանում ստացված, վարույթ ընդունված և չընդունված բողոքների վերաբերյալ)

#### 2018 թվականի ընթացքում

Գործերի տեսակ	Ներկայացված բողոքներ	Վարույթ ընդունված	Վարույթ չընդունված
Ընդհանուր	2280 <sup>1</sup>	294 (13%)	1986 (87%)
Քաղաքացիական	1441	137 (10 %)	1304 (90%)
Վարչական	782	155 (20%)	627 (80%)

#### 2019 թվականի ընթացքում

Գործերի տեսակ	Ներկայացված բողոքներ	Վարույթ ընդունված	Վարույթ չընդունված
Ընդհանուր	2769 <sup>2</sup>	336 (12%)	2433 (88%)
Քաղաքացիական	1812	216 (12 %)	1596 (88%)
Վարչական	879	110 (13 %)	769 (87%)

#### 2020 թվականի ընթացքում

<sup>1</sup> այդ թվում՝ Վճռաբեկ դատարանի դատական ակտերի դեմ նոր հանգամանքներով բողոքները:  
<sup>2</sup> այդ թվում՝ Վճռաբեկ դատարանի դատական ակտերի դեմ նոր հանգամանքներով բողոքները:

Գործերի տեսակ	Ներկայացված բողոքներ	Վարույթ ընդունված	Վարույթ չընդունված
<b>Ընդհանուր</b>	2880 <sup>3</sup>	311 (11%)	2569 (89%)
<b>Քաղաքացիական</b>	1818	228 (13 %)	1590 (87%)
<b>Վարչական</b>	1003	73 (7 %)	930 (93%)

2021 թվականի ապրիլի 14-ին ընդունված «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՕ-331-Ն օրենքով որպես նոր մասնագիտացված դատարան նախատեսվեց հակակոռուպցիոն դատարանը: Բարձրագույն դատական ատյանում այս գործերի քննության մասնագիտացվածությունն ու առավել արդյունավետությունն ապահովելու նպատակով անհրաժեշտ է Վճռաբեկ դատարանում ստեղծել նաև նոր՝ Հակակոռուպցիոն պալատ: Ընդ որում, հենց հակակոռուպցիոն պալատի ներսում ևս մասնագիտացվածությունն ապահովելու նպատակով անհրաժեշտ է, որպեսզի կոռուպցիոն հանցագործությունների կայացված դատական ակտերի վերաբերյալ բողոքները և հակակոռուպցիոն քաղաքացիական գործերով կայացված դատական ակտերի դեմ բողոքների վերաբերյալ գործերը քննեն առանձին մասնագիտացված կազմեր:

Պետք է նկատի ունենալ նաև այն հանգամանքը, որ Կառավարության 2021-2026 թթ. գործունեության ծրագրով ևս որպես դատաիրավական բարեփոխումների նպատակ նախատեսված է ապահովելու դատավորների ենթամասնագիտացումների առկայությունն իրավունքի տարբեր ենթադիրտներում, որի միջոցով մի կողմից կերաշխավորվի գործերի առավել մասնագիտական քննությունը, հատկապես երբ խոսքը վերաբերում է բարդ, համալիր իրավահարաբերությունների և նեղ մասնագիտական գիտելիքների կիրառություն պահանջող գործերի քննությանը, մյուս կողմից՝ հնարավորություն կստեղծի վերաբաշխելու դատական համակարգի ընդհանուր ծանրաբեռնվածությունը:

Հարկ է նկատել նաև, որ Եվրոպական դատավորների խորհրդատվական խորհուրդը իր (CCJE-GT) 15-րդ կարծիքի 44-րդ կետով նշել է, որ դատարանի ավելի բարձր ատյաններում դատավորների մասնագիտացումը դատավորների մեջ պետք է որոշակի բազմակողմանիության հնարավորություն տա, որպեսզի տարբեր տեսակի գործեր քննելիս հնարավոր լինի ձկունություն ցուցաբերել, ընդ որում՝ ձկունությունն

<sup>3</sup> այդ թվում՝ Վճռաբեկ դատարանի դատական ակտերի դեմ նոր հանգամանքներով բողոքները:

անհրաժեշտ է, որպեսզի ավելի բարձր ատյանի դատարանները պատշաճ կատարեն իրենց օրինական և սահմանադրական պարտականությունները, այսինքն՝ երաշխավորեն օրենսդրության և կոնկրետ քննվող գործերի նկատմամբ հետևողականությունը<sup>4</sup>:

2. Ղատավորների թեկնածուների և առաջխաղացման ենթակա թեկնածուների ցուցակների համալրման ճկուն մեխանիզմների ներդրումը:

Ներկայումս Ղատական օրենսգիրքը սահմանում է Ղատավորների թեկնածուների և առաջխաղացման ենթակա թեկնածուների ցուցակների հերթական և արտահերթ համալրման եղանակներ, ընդ որում՝ հերթական համալրումը կապվում է դատարաններում կանխատեսվող թափուր տեղերի քանակի հաշվարկի հետ, իսկ արտահերթ համալրումը՝ հերթական համալրումից կամ դրա համար տեղերի հաշվարկից հետո առաջացած նոր թափուր տեղի առաջացման հետ: Այսինքն Բարձրագույն դատական խորհուրդը համալրում իրականացնելիս միևնույն է կաշկանդված է դատական համակարգում կանխատեսվող թափուր տեղերի քանակով համալրումներն իրականացնելու պայմանով: Նշված կարգավորումը, սակայն, խնդրահարույց կարող է լինել այն դեպքերում, երբ անկանխատեսելի հանգամանքներում դատավորների թափուր տեղեր առաջանան այն պայմաններում, երբ դեռ չի լրացել հերթական համալրումն իրականացնելու համար թափուր տեղերի հաշվարկման ժամկետը, իսկ արտահերթ համալրումն իրականացնելու պարագայում կարող է որոշակի ժամանակահատվածով առկախված մնալ առաջացած թափուր տեղերում դատավորների նշանակումը՝ մինչև արտահերթ համալրման իրականացումը:

3. Բարձրագույն դատական խորհուրդի կողմից Հանրապետության նախագահի նշանակմանն առաջարկելու նպատակով դատավորի թեկնածու ընտրելիս առաջարկություն ներկայացնելու հաջորդականության վերանայումը:

Ղատական օրենսգրքի 115-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ և 5-րդ կետերի համաձայն՝ առաջին ատյանի դատարանի դատավորի պաշտոնի թափուր տեղ առաջանալու դեպքում Բարձրագույն դատական խորհուրդը Հանրապետության նախագահի նշանակմանն առաջարկելու նպատակով թեկնածու ընտրելիս առաջարկություն ներկայացնում է հետևյալ հաջորդականությամբ.

...

4) չորրորդ հերթին՝ դատավորների թեկնածուների ցուցակում ընդգրկված գիտական աստիճան ունեցող հավակնորդներին: Մի քանի անձանց առկայության

<sup>4</sup> Հասանելի է <https://rm.coe.int/CoERMPublicCommonSearchServices/DisplayDCTMContent?documentId=090000168046a4b7> հղումով:

դեպքում նախապատվությունը տրվում է առավել երկար փորձառություն ունեցող հավակնորդին.

5) հինգերորդ հերթին՝ թեկնածուների ցուցակի համապատասխան մասնագիտացման բաժնի՝ Արդարադատության ակադեմիան ավելի վաղ ավարտած թեկնածուներին՝ ըստ Արդարադատության ակադեմիան ավարտելու հանրագումարային միավորների նվազման կարգի: Հավասար հանրագումարային միավորների առկայության դեպքում նախապատվությունը տրվում է առավել երկար փորձառություն ունեցող թեկնածուին:

Գործող կարգավորումներից, ըստ էության, հետևում է, որ դատավորի թափուր տեղ առաջանալու դեպքում Հանրապետության նախագահին թեկնածու առաջադրելիս դատավորների թեկնածուների ցուցակում ընդգրկված գիտական աստիճան ունեցող հավակնորդները նախապատվություն ունեն նույն ցուցակում ընդգրկված Արդարադատության ակադեմիան ավելի վաղ ավարտած թեկնածուների նկատմամբ այն դեպքում, երբ գիտական աստիճան ունեցող հավակնորդն անցնում է որակավորման ստուգման միայն հարցազրույցի փուլը, իսկ Արդարադատության ակադեմիայում ուսուցում է անցնում միայն գործնական հմտությունների զարգացման մասով: Ավելին, գործող կարգավորումների համատեքստում ստեղծվել է մի իրավիճակ, երբ Արդարադատության ակադեմիան բարձր միավորներով ավարտած թեկնածուները դատավորի թափուր տեղ առաջանալու դեպքում նշանակման համար ներկայացվում են վերջին հերթով:

4. 8 և 10 տարվա մասնագիտական ստաժ ունեցող անձանց առաջխաղագման ենթակա դատավորների ցուցակում ընդգրկվելու հնարավորության նախատեսումը:

Վենետիկյան հանձնաժողովն իր փաստաթղթերից մեկում նշել է. «31. Բարձրագույն դատարանի մատչելիության խիստ սահմանափակումը ցածր դատարանների թեկնածուներով կարող է հանգեցնել դատական իշխանության մեկուսացմանը և նպաստել պահպանողական և կոշտ կարծիքների տարածմանը, ի հակադրություն նոր գաղափարների և հասկացությունների համար բաց լինելուն, որոնք կարող են ներկայացվել հասարակության տարբեր շերտերի իրավաբանների կողմից:

32. Չեխիայի Հանրապետությունում, օրինակ, Գերագույն դատարանը կայուն հաստատություն է, որը գոյություն ունի կոմունիզմի ժամանակներից և որի կազմը միայն աստիճանաբար համալրվում է նոր դատավորներով, հիմնականում ստորին ատյանի դատարաններից: Այս դատարանի նախադեպային իրավունքը քննադատվել է իրավաբանական պրակտիկայից և ժամանակակից իրավաբանական հայեցակարգերից կտրված լինելու հիմքով: Մյուս կողմից, Չեխիայի Հանրապետության Բարձրագույն վարչական դատարանը ստեղծվել է 2003 թ., և նրա առաջին կազմի մեջ

են մտել ոչ միայն դատավորները, այլև գիտնականներ, փաստաբանները կամ պետական կառավարման կամ օրենսդիր իշխանության բարձր որակավորում ունեցող ներկայացուցիչներ: Բարձրագույն վարչական դատարանը վայելում է հանրության մեծ վստահությունը և հայտնի է իր արագ, ճկուն և որակյալ դատական որոշումների ընդունմամբ: Այսպիսով, դատական համակարգում աշխատանքի մեծ փորձի առկայությունը պարտադիր չէ, որ ընկալվի որպես առավելություն, հատկապես, երբ խոսքը վերաբերում է կայացող հասարակություններին:»<sup>5</sup>:

Այսպիսով, Վենետիկի հանձնաժողովը կարևորում է բարձր դատական ատյանների բաց լինելը, որպեսզի դրանցում ներկայացվեն հասարակության տարբեր շերտերի իրավաբաններ՝ ճկուն և որակյալ դատական որոշումներ կայացնելու նպատակով:

Այս համատեքստում Վենետիկյան հանձնաժողովի փաստաթղթերում<sup>6</sup> արտահայտված դիրքորոշումները հանգում են հետևյալին.

1. Բարձրագույն դատարանի մատչելիության խիստ սահմանափակումը ցածր դատարանների թեկնածուներով կարող է հանգեցնել դատական իշխանության մեկուսացմանը և նպաստել պահպանողական և կոշտ կարծիքների տարածմանը, ի հակադրություն նոր գաղափարների և հասկացությունների համար **բաց լինելուն**, որոնք կարող են ներկայացվել հասարակության տարբեր շերտերի իրավաբանների կողմից:

2. Բարձրագույն դատական ատյանի նման բաց լինելը, սակայն, պետք է ուղեկցվի դատավորի ընտրության այնպիսի գործընթացով, որը երաշխավորի դատավորների կոմպետենտությունը, նրանց անկախությունը և իրավաբան-մասնագետների համայնքի կողմից ընդունված լինելը:

3. **Ղատավոր չհանդիսացող թեկնածուներից ավելի բարձր ակադեմիական որակավորում պահանջելը չափազանց սահմանափակող է և դժվար է հիմնավորել:** «Բարձր հեղինակություն ունեցող իրավաբան» (lawyer with a distinguished reputation) պահանջը, սակայն, խնդրահարույց չի թվում:

4. «Իրավունքի բնագավառում բարձր որակավորում ունեցող մասնագետին» **չպետք է ստիպել քննություն հանձնել, որպեսզի ապացուցի, որ նա կարող է զբաղվել իրավունքի հարցերով, ինչը այդ դատարանի աշխատանքի էությունն է:**

<sup>5</sup> [CDL-AD\(2018\)003, Opinion on the Law on amending and supplementing the Constitution \(Judiciary\) of the Republic of Moldova:](#)

<sup>6</sup> [CDL-AD\(2018\)003, Opinion on the Law on amending and supplementing the Constitution \(Judiciary\) of the Republic of Moldova, CDL-AD\(2019\)009, Urgent Opinion on the selection and appointment of Supreme Court judges of Georgia:](#)

5. Սակայն, բարձրագույն դատարանի դատավոր դառնալու համար 30 տարեկան լինելու և ոչ ավելի, քան հինգ տարի որպես դատավոր, իրավաբան կամ գիտնական աշխատելու ստաժ ունենալու պահանջները **ցածր են, և ընդհանուր առմամբ ոչ դատավոր թեկնածուների չափանիշները պետք է ավելի մեծ ուշադրություն դարձնեն փորձին, ինչպես նաև ավելի բարձր տարիքային պահանջներին:**

Վերոշարադրվածի համատեքստում ահնրաժեշտություն է առաջանում վերանայել Ղատական օրենսգրքում առաջխաղացման ենթակա դատավորների ցուցակում ընդգրկվելու հնարավորություն ունեցող անձանց շրջանակը՝ անհրաժեշտ մասնագիտական ստաժ ունեցող անձանց համար ևս նախատեսել նման հնարավորություն:

#### 5. Իրավասության մասին վեճերի լուծումը:

Գործող քաղաքացիական, քրեական դատավարության օրենսգրքերով, ինչպես նաև «Սնանկության մասին» օրենքով նախատեսված են դատարանների միջև իրավասության վերաբերյալ վեճերի լուծման ընթացակարգեր: Իրավասության վերաբերյալ վեճերի կարգավորման վերաբերյալ դրույթներ նախատեսված են նաև մի շարք այլ երկրների դատավարական օրենսդրություններով, մասնավորապես, Ղազախստանի<sup>7</sup>, Մոլդովայի<sup>8</sup>, Գերմանիայի<sup>9</sup>, Բուլղարիայի<sup>10</sup> և Սերբիայի<sup>11</sup> քաղաքացիական դատավարության օրենսգրքերով, Ֆինլանդիայի<sup>12</sup> դատավարական օրենսգրքով:

Քաղաքացիական դատավարության օրենսգրքի 26-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է, որ դատարանների միջև ընդդատության կամ ենթակայության մասին վեճերը լուծում է Վճռաբեկ դատարանի նախագահը: Քրեական դատավարության օրենսգրքի 51-րդ հոդվածը նախատեսում է, որ առաջին ատյանի դատարանների միջև ընդդատության մասին վեճերը լուծում է Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի նախագահը: «Սնանկության մասին» օրենքի 4-րդ հոդվածի 6-րդ մասը ևս նախատեսում է, որ ընդհանուր իրավասության և սնանկության դատարանների միջև ենթակայության մասին վեճերը լուծում է Վճռաբեկ դատարանի նախագահը: Այսպիսով, գործող դատավարական օրենսդրությամբ որդեգրվել է այն մոտեցումը, որ դատարանների միջև իրավասության վերաբերյալ վեճերի լուծումը բոլոր՝ քաղաքացիական, վարչական, քրեական և սնանկության գործերով, իրականացնում է Վճռաբեկ դատարանի նախագահը միանձնյա: Այս համատեքստում պետք է նկատի

<sup>7</sup> [https://online.zakon.kz/Document/?doc\\_id=34329053:](https://online.zakon.kz/Document/?doc_id=34329053)

<sup>8</sup> [https://cis-legislation.com/document.fwx?rgn=3837:](https://cis-legislation.com/document.fwx?rgn=3837)

<sup>9</sup> [https://www.gesetze-im-internet.de/englisch\\_zpo/englisch\\_zpo.html:](https://www.gesetze-im-internet.de/englisch_zpo/englisch_zpo.html)

<sup>10</sup> [https://kenarova.com/law/Code%20of%20Civil%20Procedure.pdf:](https://kenarova.com/law/Code%20of%20Civil%20Procedure.pdf)

<sup>11</sup> [https://arhiva.mpravde.gov.rs/images/Civil%20Procedure%20Law\\_180411.pdf:](https://arhiva.mpravde.gov.rs/images/Civil%20Procedure%20Law_180411.pdf)

<sup>12</sup> [https://www.finlex.fi/fi/laki/kaannokset/1734/en17340004\\_20150732.pdf:](https://www.finlex.fi/fi/laki/kaannokset/1734/en17340004_20150732.pdf)



ունենալ, որ ներկայումս գործող օրենսդրական կարգավորումների պայմաններում բոլոր դատարանները գործերը քննության են առնում ըստ իրենց մասնագիտացման սկզբունքի, իսկ Վճռաբեկ դատարանի նախագահը, հանդիսանալով այս կամ այն մասնագիտացմամբ (քրեական, քաղաքացիական և վարչական) պալատի դատավոր, ըստ էության պետք է լուծի բոլոր գործերով իրավասության վերաբերյալ վեճերը: Այս առումով, սակայն, հարկ է նկատել, որ պայմանավորված ընդդատության և ենթակայության տեսակներով, հատկանիշներով (առարկայական, տարածքային, սուբյեկտային, այլընտրանքային, ըստ գործերի փոխկապակցվածության), դրանց հարաբերակցությամբ՝ իրավունքի կոնկրետ ճյուղին բնորոշ առանձնահատկություններով, գործերի ընդդատության և ենթակայության որոշումը կարող է ավելի արդյունավետ լինել, եթե այն որոշվում է համապատասխան ոլորտի նեղ մասնագիտացում ունեցող դատավորների կողմից: Մինչդեռ, Վճռաբեկ դատարանի նախագահը, անկախ իր մասնագիտացումից, լուծում է բոլոր դատարանների միջև իրավասության մասին վեճերը: Միայն Վճռաբեկ դատարանի նախագահի կողմից իրավասության վերաբերյալ վեճերի լուծումը հանգեցնում է նաև վերջինիս ծանրաբեռնվածությանը, որն աճի խիստ միտումներ ունի:

Այսպես, ընդդատության և ենթակայության վեճերի նախաձեռնման վերջին տարիների վիճակագրության ուսումնասիրությունը ցույց է տալիս հետևյալ պատկերը.

	2018	2019	2020
Քաղաքացիական և վարչական գործերով	1	16	71
Քրեական գործերով	4	5	8

Միևնույն ժամանակ, ենթակայության մասին վեճեր առաջանում են նաև վարչական դատարանի և ընդհանուր իրավասության (քրեական) դատարանի միջև: Խնդիրը կայանում է նրանում, որ վարչական դատավարության օրենսգրքի 81-րդ հովածի 1-ին մասին համապատասխան վարչական դատարանը պահանջն իրեն ընդդատյա չլինելու հիմքով գործը կարող է ուղարկել նաև ընդհանուր իրավասության (քրեական) դատարանի քննությանը: Այս կապակցությամբ, նախ Վճռաբեկ դատարանը ՇԴ2/0007/15/12 գործով 2013 թվականի սեպտեմբերի 13-ի ոռշմամբ արտահայտել է հետևյալ իրավական դիրքորոշումը. «Հիմք ընդունելով ընդդատության և ընդհանուր իրավասության դատարանի կողմից դատական ակտի կատարման փուլում ունեցած իրավասության վերաբերյալ սույն որոշման 17-18-րդ կետերում շարադրված վերլուծությունը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ պատժից պայմանական վաղաժամկետ ազատելը և պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժով փոխարինելը քրեաիրավական ինստիտուտներ են, որոնք կարգավորվում են ՀՀ քրեական

օրենսգրքի 76-րդ և 77-րդ հոդվածներով: Այդ ինստիտուտների կիրառման կարգն ու պայմանները նախատեսված են ՀՀ քրեադատավարական և քրեակատարողական օրենսգրքերով՝ որպես դատական ակտն ի կատար ածելիս ծագող հարցեր: Այլ խոսքով՝ *պատժից պայմանական վաղաժամկետ ազատելու կամ պատժի չկրած մասնավելի մեղմ պատժով փոխարինելու հետ կապված իրավահարաբերություններն իրենց բնույթով քրեաիրավական են, հետևաբար ենթակա են լուծման ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով՝ դատապարտյալի պատիժը կրելու վայրի դատարանի կողմից:* ... Ընդ որում, չնայած այն հանգամանքին, որ այս դեպքում մասնավոր անձը (դատապարտյալը) վիճարկում է վարչական մարմնի՝ իր շահերին առնչվող որոշման կամ գործողության օրինականությունն ու հիմնավորվածությունը, այդուհանդերձ, տվյալ վեճը չի կարող համարվել հանրային իրավահարաբերություններից բխող այնպիսի վեճ, որի լուծումն ընդդատյա է վարչական դատարանին: Քրեաիրավական հարաբերությունները նույնպես հանրային իրավահարաբերությունների տեսակ են, սակայն այս դեպքում շահագրգիռ անձի բողոքի քննարկման և լուծման իրավասությունն օրենսդրորեն վերապահված է ընդհանուր իրավասության (քրեական) դատարանին և դուրս է վարչական դատարանի իրավասության շրջանակներից:»:

Այնուհետև, Սահմանադրական դատարանը 2019 թվականի հունվարի 22-ի թիվ Սդդ-1439 որոշմամբ քրեակատարողական հիմնարկի վարչակազմի գործողությունների և որոշումների դեմ ներկայացվող բողոքների ենթակայության հարցի կապակցությամբ արտահայտել է հետևյալ իրավական դիրքորոշումը. «Անդրադառնալով դիմողի այն դիրքորոշմանը, որ դատարանի հստակեցման պարագայում, հարց է առաջանում, թե ինչ դատավարական կարգով պետք է առաջնորդվել դատապարտյալի կողմից ՔԿՀ պետի որոշումների դատական կարգով բողոքարկումները քննելիս, Սահմանադրական դատարանը փաստում է, որ վերոհիշյալ հարցերի կարգավորման իրավասությունը վերապահված է օրենսդրին, որի կողմից առաջարկվող լուծումները կարող են առնչություն չունենալ սույն գործով վիճարկվող դրույթների հետ: Մասնավորապես, պատժի կրման ընթացքում դատապարտյալի իրավունքների դատական պաշտպանության վերաբերյալ իրավակարգավորումները կարող են նախատեսվել ինչպես վարչական դատավարության, այնպես էլ քրեական դատավարության կամ այլ օրենսդրության շրջանակներում:

Սահմանադրական դատարանը նաև նշում է, որ մինչև Ազգային ժողովի կողմից սույն որոշմամբ արտահայտված առկա համակարգային իրավական անորոշության հաղթահարումը, քրեակատարողական հիմնարկի պաշտոնատար անձանց գործողությունների (անգործության) բողոքարկման հետ կապված գործերը ենթակա են

քննության << վարչական դատարանի կողմից, «Դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 21-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն, քանի դեռ պատժի կատարման հետ կապված կոնկրետ գործի, նյութի կամ հարցի քննության իրավասությունն օրենքով հստակ վերապահված չէ քրեական գործեր քննող ընդհանուր իրավասության դատարանին»:

Քննարկվող խնդրի համատեքստում վարչական և ընդհանուր իրավասության (քրեական) դատարանների միջև գործի ենթակայությունը որոշելու անհրաժեշտություն առաջացել է, թիվ ԵԴ/0008/15/19 դատական գործով: Նշված գործով Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի դատավորը դիմել է Վճռաբեկ դատարանի նախագահին քրեակատարողական հիմնարկի վարչակազմի գործողությունների և որոշումների դեմ ներկայացվող բողոքների ենթակայությունը որոշելու հարցով: 2019 թվականի մարտի 20-ի որոշմամբ Վճռաբեկ դատարանի նախագահը, եզրահանգելով, որ քրեակատարողական հիմնարկի վարչակազմի գործողությունների և որոշումների դեմ ներկայացվող բողոքները ենթակա են քննության վարչական դատարանի կողմից, նշել է, որ նշել է, որ Վճռաբեկ դատարանի նախագահը << քրեական դատավարության օրենսգրքի 51-րդ հոդվածով նախատեսված իր լիազորությունն իրականացնելիս կարող է բացառապես լուծել << քրեական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով քննվող առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանների միջև ծագած **տարածքային ընդդատության** մասին վեճերը: Մինչդեռ, տվյալ գործով դատավորի կողմից բարձրացվել է ոչ թե << քրեական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով քննվող առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանների միջև գործի քննության տարածքային ընդդատության վերաբերյալ վեճ, այլ, ըստ էության, << քրեական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով գործեր քննող **առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի և վարչական դատարանի միջև գործի քննության ենթակայության մասին վեճ**, որի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի նախագահի կողմից որոշում կայացնելու (վեճը լուծելու) օրենսդրական հիմքը բացակայում է: Նման պայմաններում առաջանում է վարչական և ընդհանուր իրավասության (քրեական) դատարանների միջև ենթակայության մասին վեճերի լուծման մեխանիզմների նախատեսման անհրաժեշտությունը:

Միևնույն ժամանակ, հաշվի առնելով, որ 2021 թվականի ապրիլի 14-ին Ազգային ժողովի կողմից ընդունված «Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հ-333-Ն օրենքի 5-րդ հոդվածով նախատեսվում է, որ բոլոր դեպքերում կոռուպցիոն հանցագործությունների վերաբերյալ գործերը փոխանցվում են հակակոռուպցիոն

դատարան, ընդդատության մասին վեճեր կարող են առաջանալ նաև առաջին ատյանի դատարանի և հակակոռուպցիոն դատարանի միջև:

Ամբողջ վերոշարադրյալը վկայում է «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում և հարակից օրենքներում համապատասխան փոփոխություններ կատարելու անհրաժեշտության մասին:

## **2. Առաջարկվող կարգավորման բնույթը**

«Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» և հարակից օրենքների նախագծերով (այսուհետ՝ Նախագծեր)

1) նախատեսվում են Վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի վերացումով ստեղծել երկու ինքնուրույն, առանձին մասնագիտացումներ ունեցող քաղաքացիական և վարչական պալատներ.

2) Վճռաբեկ դատարանում նախատեսվում է ևս մեկ մասնագիտացված՝ Հակակոռուպցիոն պալատը.

3) կարգավորվում են Վճռաբեկ դատարանի քաղաքացիական, վարչական և հակակոռուպցիոն պալատների կազմավորման և բնականոն գործունեության ապահովմանն հետ կապված հարցերը.

4) նախատեսվում է դատավորների թեկնածուների և առաջխաղացման ենթակա թեկնածուների ցուցակների համալրման ձևերը մեխանիզմներ՝ առանց ժամկետների և համալրման ենթակա քանակի սահմանափակման.

5) վերանայվում է դատավորի թափուր տեղ առաջանալու դեպքում Բարձրագույն դատական խորհրդի կողմից Հանրապետության նախագահի նշանակմանն առաջարկելու նպատակով թեկնածու ընտրելիս առաջարկություններ կայացնելու հաջորդականությունը՝ գիտական աստիճան ունեցող հավակնորդների նկատմամբ նախապատվությունը Արդարադատության ակադեմիան ավելի վաղ ավարտած թեկնածուներին տալով.

6) նախատեսվում է 8 և 10 տարվա մասնագիտական ստաժ ունեցող անձանց՝ առաջխաղացման ենթակա դատավորների ցուցակում ընդգրկվելու հնարավորության

7) նախատեսվում են դատարանների միջև իրավասության մասին վեճերի լուծման արդյունավետ մեխանիզմներ:

### **3. Նախագծերի մշակման գործընթացում ներգրավված ինստիտուտները և անձինք**

Նախագծերը մշակվել են Արդարադատության նախարարության «Օրենսդրության զարգացման և իրավական հետազոտությունների կենտրոն» հիմնադրամի կողմից:

### **4. Ակնկալվող արդյունքը**

Նախագծերի ընդունմամբ ակնկալվում է ապահովել Վճռաբեկ դատարանում վարչական գործերի քննության իրականացումը մասնագիտացված վարչական պալատի միջոցով, ինչպես նաև հնարավորություն ընձեռել Բարձրագույն դատական խորհրդին առավել ձկուն մեխանիզմներով ապահովել դատավորների թեկնածուների և առաջխաղացման ենթակա թեկնածուների ցուցակների համալրումը:

### **5. Օրենքների ընդունման կապակցությամբ այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտությունը և պետական բյուջեի եկամուտներում և ծախսերում սպասվելիք փոփոխությունները.**

«Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին», «Հաստատանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» և «Սնանկության մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին օրենքների ընդունման կապակցությամբ այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտությունը բացակայում է: «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» սահմանադրական օրենքի, «Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» և «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքների նախագծերի ընդունման կապակցությամբ ակնկալվում է ՀՀ պետական բյուջեից տարեկան շուրջ 34.9 մլն դրամի լրացուցիչ միջոցների հատկացման անհրաժեշտության, որից ընթացիկ ծախսերի գծով շուրջ 28.3 մլն դրամ և ոչ ֆինանսական ակտիվների ձեռքբերման մասով շուրջ 6.6 մլն դրամ:

### **6. Կապը ռազմավարական փաստաթղթերի հետ**

Նախագծերի ընդունումը բխում է Հայաստանի Հանրապետության դատական և  
իրավական բարեփոխումների 2019-2013 թվականների ռազմավարությունից: